

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, այսուհետ՝ մասնակից պետություններ,

ելևելով մարդու իրավունքների համընդհանուր Յճակագրի սկզբունքներից եւ նորմերից, Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին 1991 թվականի դեկտեմբերի Համաձայնագրից, 1991 թվականի դեկտեմբերի 21-ի՝ Ալմաթիի Յճակագրից, Նախկին ԽՍՀՄ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող պայմանագրերի ամնչությամբ իրավահաջորդության հարցի մասին 1992 թվականի հուլիսի 6-ի՝ Փոխըմբռնման հուշագրից,

հաշվի առնելով հեղինակային իրավունքի ժամանակակից դերը ազգային մշակութային ներուժի ձեւավորման գործում, միջազգային մշակութային փոխանակման, ինչպես նաեւ իրավահավասար միջպետական առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացման մեջ,

ձգտելով գիտության, գրականության եւ արվեստի ստեղծագործությունները օգտագործելու միջոցով մշակութային արժեքների փոխադարձ փոխանակման բնագավառում համագործակցության հետագա ընդլայնմանը,

անհրաժեշտություն համարելով սահմանելու հեղինակային եւ հարակից իրավունքների փոխադարձ պահպանության պայմանները եւ կարգը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈՂԱԾ 1

Մասնակից պետություններն իրենց տարածքներում ապահովում են հեղինակային իրավունքի մասին համաշխարհային Կոնվենցիայում (1952 թվականի խմբագրությամբ) Նախկին ԽՍՀՄ մասնակցությունից բխող միջազգային պարտավորությունների կատարումը, ելևելով նրանից, որ Նախկին ԽՍՀՄ համար նշված Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ժամկետն է հանդիսանում այն ժամկետը, որով յուրաքանչյուր մասնակից պետություն համարում է իրեն պարտավորված դրա դրույթներով:

Յուրաքանչյուր մասնակից պետություն դրա վերաբերյալ համապատասխան հայտարարություն կուղարկի կրթության, գիտության եւ մշակույթի հարցերով Միավորված ազգերի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՈ) Գլխավոր տնօրենին:

ՀՈՂԱԾ 2

Մասնակից պետությունները իրենց միջեւ հարաբերություններում կիրառում են հեղինակային իրավունքի մասին համաշխարհային Կոնվենցիան (1952 թվականի խմբագրությամբ) ինչպես 1973 թվականի մայիսի 27-ից հետո ստեղծված ստեղծագործությունների նկատմամբ, այնպես էլ Մասնակից պետությունների օրենսդրություններով մինչեւ այդ ժամկետը պահպանվող ստեղծագործությունների նկատմամբ, նույն պայմաններով, որոնք ազգային օրենսդրությամբ սահմանված են սեփական հեղինակների նկատմամբ:

Հեղինակային իրավունքի պահպանության ժամկետները սահմանվում են այն մասնակից պետության օրենսդրությանը համապատասխան, որը տրամադրում է պահպանությունը, սակայն նա պարտավոր չէ ապահովել պահպանությունը մյուս համապատասխան մասնակից պետությունում սահմանված պահպանության ժամկետից ավելի երկար ժամանակով:

ՀՈՂԱԾ 3

Մասնակից պետությունները անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեն գրական եւ

գեղարվեստական ստեղծագործությունների պահպանության մասին Բեռնի Կոնվենցիայի, ձայնագրություններ արտադրողների իրենց ձայնագրությունների չթուլատրված վերարտադրությունից պահպանության մասին Ժնևի Կոնվենցիայի, կատարող արտիստների, ձայնագրություններ արտադրողների, հեռուստառադիոհաղորդման կազմակերպությունների իրավունքների պահպանության մասին Յոնի Կոնվենցիայի պահանջների մակարդակին հավասար հեղինակային եւ հարակից իրավունքների պահպանությունն ապահովող օրենքի նախագծերի մշակման եւ ընդունման համար:

ՅՈՒՂԱԾ 4

Մասնակից պետությունները համատեղ կաշխատեն հեղինակային եւ հարակից իրավունքների օբյեկտների անօրինական օգտագործման դեմ պայքարում եւ իրենց իրավասու կազմակերպությունների միջոցով կօժանդակեն կոնկրետ ծրագրերի եւ միջոցառումների մշակմանը:

ՅՈՒՂԱԾ 5

Մասնակից պետությունները կնպաստեն հավաքական հիմունքներով հեղինակային իրավունքների կառավարման ոլորտում ազգային հեղինակային-իրավական կազմակերպությունների ստեղծմանը եւ գործունեությանը, այդ կազմակերպությունների միջեւ համագործակցության մասին համաձայնագրերի կնքմանը:

ՅՈՒՂԱԾ 6

Մասնակից պետությունները համապատասխան համաձայնագրերում կնախատեն հեղինակային եւ այլ պարզեւատրման կրկնակի հարկումից խուսափելու, փոխադարձ հաշվարկների կարգի որոշման վերաբերյալ հարցերի լուծումը եւ միջոցներ կձեռնարկեն դրանց ժամանակին իրագործման համար:

ՅՈՒՂԱԾ 7

Սույն Յամաձայնագիրը բաց է այլ, նախկինում ԽՍՀՄ կազմի մեջ մտնող, պետությունների կողմից միանալու համար:

Սույն Յամաձայնագիրը ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ մասնակից պետությունների ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Մյուս մասնակից պետությունների համար սույն Յամաձայնագիրը ուժի մեջ է մտնում՝ նրանց կողմից այդ ընթացակարգերի կատարման մասին ծանուցումը ավանդապահին հանձնելու օրվանից:

Մասնակից պետությունը կարող է չեղյալ հայտարարել սույն Յամաձայնագիրը՝ նման մտադրության մասին ավանդապահին գրավոր հայտարարություն ուղարկելու օրվանից 12 ամիս հետո:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1993 թվականի սեպտեմբերի 24-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության կառավարության արխիվում, որը սույն Յամաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Յամաձայնագրի հաստատված պատճենները:

* Յամաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1996 թվականի փետրվարի 12-ից:

